Գիրք անասնաբուժութեան (Traité d'hygiène vétérinaire), 2 հատոր։

Բառգիրք՝ բնական գիտութեանց մէջ գործածելիք բառից, հանդերձ ստուգաբանութեամբք արմատական նշանակութեանց, 2 հատոր։

Բառգիրք՝ ի հայէ ի ռուս, աշխատասիրութք Աղէքսանդրի Մակարեան Խուդաբաշեանց, տպեալ ի Մոսկուա, 2 հատոր, փառակազմ և ոսկեզօծ։

## ՆՈՐ ՕՐԱՑՈՅՑ

1867 ամի օրացոյցն սուրբ Աթոռոյս Տպարանին մէջ ի լոյս ընծայուելով, կը փութամք Միաբանութեանս կողմէն ջերմ շնորհակալութեամբ իւր երախտագիտութիւնը յայտնել Խասգիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ Արժ. Տէր Ներսէս քահանային, որ բարեհաճեցաւ տոմարագիտութեան հարկաւոր ուսմունքը Միաբանութեանս աննախանձաբար հաղորդելով՝ անոր ազատ հաճութեանը թողուլ ուզած ժամանակ հրատարակելու ազգային օրացոյց։ Եւ Միաբանութիւնս հանդերձ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր՝ որքան որ երախտագիտական արդեամբք ձանչեց ու պատուեց զյիշեալ Արժ. Հայրը, այսու ամենայնիւ իրեն պարտաւորութիւն սեպեց նաեւ ըստ յատուկ խնդրանաց աստուածասէր քահանային, անոր առ սուրբ Աթոռս ցոյց տուած սոյն շնորհքը արձանագրել ի տումարի վանացս յանմոռաց յիշատակութիւն ապագայից։

Նաեւ ըստ խնդրոյ Արժ. Հօր՝ սոյն տոմարական գիտութեան հետեւող և ուսանող եկեղեցականք իրենց նուիրական պարտք պիտի համարին, նախ յիշատակել միշտ Նորա անունը ի ժամ մատուցման սուրբ Պատարագին, երկրորդ՝ Միաբանութենէս դուրս եղող անձանց չսովրեցընել։ Այն բարեպաշտական թէութիւնները հաստատ պահելու խոստմամբ՝ առաջիկայ 1867 տարւոյն օրացոյցը փութաց Միաբանութիւնս ի լոյս ընծայել, և սեպտեմբեր ամսոյն մէջ Ամենապատիւ Սրբազան Հայրը կանխեց իւր բոլոր միաբանից մէկ մէկ հատ ընծայել, բարեմաղթելով անոնց ընդ մերձակայ նոր տարւոյս՝ նաեւ անձանձրոյթ յարատեւութիւն ուսմանց և գիտութեանց և բարենախանձ ոգւով միշտ ի յառաջադիմութիւն կրթելու յօգուտ ընդհանուր Ազգիս և ի պարծանս Սուրբ Աթոռիս։

Յիշեալ օրացոյցը կը ծախուի ի Պոլիս ամեն գրավաճառաց խանութը։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ

### ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես Թիւ 7 երես 108)։

Է. Հարցման լուծումը՝ ելաւ էր ընդ ամենայն յուլն 420։ Ը. Հարցման լուծումը՝ հասանէին յաւուրս 25։ Թ. Հարցման լուծումը՝ ելաւ էր վարագն 360 լիտր։ Ժ. Հարցման լուծումը՝ ելաւ էր ըզն 240 լիտր։ ԺԱ. Հարցման լուծումը՝ ունէր վաճառականն դահեկան 2376։ ԺԲ. Հարցման լուծումը՝ ելաւ է նաւակն 42 դրամ։

### Հարցումն ԺԳ.

Ոմն յաշակերտաց իմոց առեալ խնձորս գեղեցիկս ի խարայ, գայր ընծայեցուցանել ինձ. պատահեցան նմա երեք պարկ ի խազուց. և հա-

digitised by A.R.A.R.@

նին առաջին պարն զկէսն եւ զչորս մասն խնձորոյն. նոյնպէս և երկրորդն՝ զկէսն և զչորս մասն. նոյնպէս և երրորդն. և զմնացեալսն երեքեր առ իւ խնձորս հինգ։ Արդ, գիտեա՛ թէ ընդ ամենայն քանի՛ լեալ էր։

Խնդիր ԺԴ.

Գինի կայր ի մի կարասի, վարդիւ կաղմեալ էին, և թակոյկք կախեալ երեք, եւ հրամայեցի հանել զգինին անդր. մին տարաւ զերեք մասն, և մին՝ զկէսն, իսկ միւսն զչորեքտասան. և զմնացեալն յայլ ամանս հանին, և էր վաթս (անուն չափոյ) յիսուն եւ չորս։ Արդ, գիտեա՛ թէ ընդ ամենայն քանի՛ էր լեալ։

Խնդիր ԺԵ.

Չի մի կայր ինձ ազնիւ, վաճառեցի, և գնոցն չորս մասինն կոլեան գնեցի, և եօթն մասինն այծեան, և տասն մասինն եղինս, և 318 դահեկանի ոչխար առի։ Արդ, գիտեա՛ թէ ընդ ամենայն քանի՛ դահեկան լինի։

Խնդիր ԺԶ.

Ես եկեղեցի շինէի, դաղատոս (քարագործ) մի կալայ որ ածէր աւուրն 140 քար, և յետ 35 աւուր գործաւորութեանն միւս այլ դաղատոս կալայ և ածէր աւուրն 218 քար. և որպէս նա նմա հաւասարեաց, եկեղեցին կատարեցաւ։ Արդ, գիտեա՛ թէ քանի՛ օրն հաւասարեաց։

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Անցեալ սեպտեմբեր ամսոյն մէջ Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքէն փոխադրականի նաւ մի հասաւ ի Յոպպէ Նելլի անուն։ Այս առագաստաւոր նաւը բուն Ն. Տ. օգոստոս 16ին մեկներ է, և 22 սեպտեմբերի հասաւ Յոպպէու նաւահանգիստը։ Յիշեալ նաւին մէջ 40 տնուոր ամերիկացի ընտանիք կային գաղթականք՝ 156 հոգիէ բաղկացեալ, որոնց նպատակն է բնակութիւն հաստատել Սարոնի դաշտերուն մէջ, որոնք կը սկսին Յոպպէէն մինչեւ Երուսաղեմայ լեռանց կիրճը, և փղշտացւոց երկրին մէջ, այն է Գազայի դաշտերը։ Ասոնք Մեսիայի ըսուած աղանդէն են. ունին իրենց հետ յատուկ քահանայ, բժիշկ և դեղագործ. նպատակնին է վաճառականութեան և երկրագործութեան պարապիլ, և իրենց աղանդը տարածելու յատուկ հոգ տանիլ. և այս նպատակիս համար պիտի բանան դպրոց մի և եկեղեցի, այլ և հիւանդանոց։ Հետերնին բերած են իրենց շարժական բնակարանները տախտակէ, երկաթէ ու քաուչուկէ, այլ և կառքեր, զոր սկսած են արդէն իրենց հարկաւորութեանը գործածել։ Ինչպէս իրենց աղանդին անունը գուշակել կու տայ, կրօնական մեծ համակրութիւն ունին Հրէից հետ, և շատ բաներու մէջ նմանութիւն մի ունենալ կը ցուցընեն անոնց. հարուստ մարդիկներ են և գործունեայ, և կերեւի թէ իրենց կրօնքին խիստ ջերմեռանդ են, վասն զի ինչպէս բնակարաննին նոյնպէս և յատուկ շարժական եկեղեցի ալ բերած են հետերնին։

LA COLONIE AMÉRICAINE DE JAFFA.

Un bateau à voile américain mouille depuis vingt jours devant Jaffa. Ce bateau qui vient de New-York, qu'il a quitté, il y a quarante trois jours, se nomme Nellie Chapin et appartient à un riche négociant: il a débarqué quarante familles qui composent ensemble 156 personnes. Le but de ces familles est d'établir une colonie dans les plaines de Saron et dans les terres occupées autrefois par les anciens Philistains. Ces gens forment une secte nouvelle de l'Eglise dite «du Messie». — Ils ont avec eux un de leurs prêtres, deux médecins et un pharmacien; ils s'adonneront au commerce, à l'agriculture et à la propagation de leur secte dans leur nouvelle patrie; et pour atteindre ce triple but, ils veulent établir parmi eux, une école, une église et un hospice. Ils sont munis de leurs maisons portatives faites de bois, de fer et de caoutchou, de chariots et de tous les ustensils nécessaires. Comme il est facile de se l'imaginer par le nom même de leur secte, ils ont une grande affinité avec les Juifs, auxquels ils ressemblent dans beaucoup de choses. Ils sont riches, actifs et très dévoués à leur culte: aussi n'ont-ils pas oublié d'apporter avec eux une église portative.

Nous venons de recevoir ces détails d'une per-

digitised by A.R.A.R.@